# ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԸ

...Անցյալ դարավերջին հայերն առաջին անգամ Հայրենիքում իրենց երկրի, իրենց ժողովրդի համար հերոսացան: Նրանք Հայաստանի պետականության վերականգնման ու ամրապնդման, Արցախի ազատագրության համար զոհված մարտիկներ էին, աշխարհահռչակ գիտնականներ, ազգային բարերարներ, բարձրաստիճան հոգեւորականներ: Ընթերցող, մենք կպատմենք այն քաջորդիների մասին, ովքեր զենքով մարտնչեցին պատմական արդարության վերականգնման համար ու չնայած նահատակվեցին, հասան իրենց նպատակին՝ հաղթողի հպարտություն հաղորդեցին մեզ: Չգտիր համակվել այդ հպարտությամբ ու անսա նրանց պատգամ-պատվիրաններին, անանձնական հայրենասիրությանը:

«ԱՎԱՆԳԱՐԴ»

ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆ

# ՀԵՐՈՍՆ ՈՒ ԻՐ ՋԱՐՄԸ

Հերոսը՝ ազգային հերոսը անհա՞տ է, թե՞ հավաքականություն, նա մեն-մենա՞կ է թշնամու դեմ ելնում, թե՞ բեւեռում է ամբողջ ժողովրդի ուժը, կամքը, դառնում է նվիրական նպատակների մարմնավորումը: Հարցնում եմ, որովհետեւ շատ հաճախ ինձ Վարդան Մամիկոնյանը, Գեւորգ Մարզպետունին, Անդրանիկ Զորավարն ու Վազգեն Սարգսյանը նույն անձնավորությունն են թվում: Թվում են մեր անկոտրում ոգու խորհրդանիշը:

Ձիվանը հերոսականության, նույնիսկ մարտունակության հետ, կարծես առնչություն չուներ: Նա աշխարհի ամենախաղաղ գործն էր անում, որմնադիր էր աշխատում Աջափնյակի՝ մեկը մյուսի հետեւից հառնող բազմահարկերում: Մայրը՝ Բավական նանը մինչեւ հիմա մոկտում է.

- Երբ Ձիվանիս շատ եմ կարոտում, գնում եմ 15-րդ թաղամաս, մատներս իր տաշած քարերին եմ քսում, հանգստանում:

Ճիշտ է, միջնեկ որդին կռվել էր Աֆղանստանում, խիզախության համար նույնիսկ Արիության մեդալի արժանացել, բայց, ինչպես այն ժամանակ էին ասում, դա հանձնել էր իր քաղաքացիական պարտքը, պարտականությունը: Աֆղանստանում, ավելի ուշ Գերմանիայում՝ խորհրդային բանակի շարքերում ծառայած տարիներին մտքով կանցնե՞ր, որ ընդամենը մի քանի տարի անց նույն այդ բանակի դեմ է կռվելու, վաշտեր, գունդարտակ է մարտադաշտ առաջնորդելու:

Աբրահամյանների ավանդապահ ընտանիքում, եթե ճիշտն ասենք, դարավերջի պատերազմը Բավական նանը սկսեց: Տան տեղը շատ էր հարմար: Նա բնիկ խոյեցի էր, իր չորս երեխաների հոր՝ մշեցի Ջավենի հետ ամուսնացել էր Սպարանի Ցովունի գյուղում, հետո, քանի որ գյուղը ջրամբարի տակ պիտի մնար, կին-ամուսին տեղափոխվել, եռահարկ առանձնատուն էին կառուցել Երեւանի ծայրամասում՝ Սեւանի փողոցում: Իր միակ աղջկան՝ Թամարին առոք-փառոք հարս պիտի ուղարկեր, երեք տղաներին հերթով ամուսնացներ, գատ-գատ հարկաբաժիններ հատկացներ: Իսկ ինքն ու Բավականը պիտի առանձնանային այգու քողտիկում, թոռներին արեւահամ միրգ, ինչպես բժիշկներն են ասում՝ էկոլոգիապես մաքուր բանջարեղեն հասցնեին...

Բավական նանը իսկի չգիտեր էլ, որ պատերազմ է սկսվել: Մի օր ինքն իրենց բերդ ամրոց հիշեցնող եռահարկ առանձնատանը մենակ էր, մորուքավոր տղաներ հայտնվեցին, ներքնահարկը, ծեղնահարկը, անգամ այդու քողտիկը զննեցին ու ըստ երեւույթին գոհ մնացին:

- Եթե ամեն ինչը բերենք, ծեռնառումք կպատրաստե՞ս,- հարցրին:

- Որ ծեւը ցույց տաք ինչի՞ չեմ պատրաստի,- չընկալեց նանը:

Մորուքավոր տղաներն անհայտացան ու քիչ անց ինքնաշեն պարկուճներ, պայթուցիչներ ու որ ամենատարօրինակն էր՝ արկղներով լուցկի բերեցին: Գիշերը Պետրոսը, Թամարը, Ձիվանը, Արշակը Ռուսաստան՝ փող աշխատելու էր գնացել, տուն եկան ու չզարմացան՝ հավանաբար նրանք էին երկրապահ-կամավորականներին իրենց տան տեղը ցույց տվել: Նստեցին նանի մոտ, փորձեցին օգնել: Պայթուցիչը լցնում էին պարկուճը, պատրույգն ամրացնում, լուցկու ֆոսֆորալուծույթով՝ զմռսում: Մի քանի օրից ծանծրացան:

- Չէ, էս տղամարդու գործ չի,- ասաց Ձիվանն ու գնաց Աղասի Արշակյանի նոր կազմավորված ջոկատին զինվորագրվեց:

Շատ չանցած հրամանատարն ինքը դարձավ:

- Հաստատ տղամարդու գործ չի,- վճռեց Պետրոսը, եղբոր ջոկատի շարքերն անցավ:

- Որ տղամարդու չի, աղջկա՞ չի ու չի,- եզրափակեց Թամարը եւ որպեսզի եղբայրներից կախում չունենա, Սանվել Գրիգորյանի ջոկատին միացավ, բուժքույր դարձավ:

Բավական նանը էդ օրերին երանի է տալիս: Բալեքը՝ ամեն մեկը մի ճակատից՝ Երասխավանից, Պառավաքարից, Խնձորեսկից վերադառնում, հոգնած, վերքերով պատած, բայց ոգեւորված հերթական հաղթանակի մանրամասներն էին պատմում: Քանի՞-քանի անգամ է պատահել, որ ինքը Ձիվանի ամբողջ ջոկատի համար կաթսաներով կերակուր է պատրաստել եւ որովհետեւ եռահարկ առանձնատանն անգամ մահճակալները չեն բավականացրել,անկողինները գետնին, կողք-կողքի է փռել:

Մի օր էլ Ձիվանը մենակ տուն եկավ, մորուքը սափրեց:

- Մամ,- ասաց,- կռիվ-կռիվ խաղալը պրծավ, հիմա մենք բանակ ենք կազմավորում, իսկական պատերազմ սկսում:

Մի պահ հապաղեց, տեսավ, թե ինչպես է մայրը վարժ շարժումներով ծեռնառումքերը զմռսում, նեղսրտեց.

- Ուրեմն դու ուզում ես, որ էդ խաղալիքներո՞վ թշնամուն հաղթենք: Մեզ մարտական զենք, զինամթերք է պետք:

- Լավ ես ասում, այ բալա, բայց մենք զենք-զինամթերք ունե՞նք:

- Չունենք, կառնենք:

Մայրը աղջկա օժիտի համար ահագին գումար էր մի կողմ դրել, Պետրոսն էլ էր աշխատած տարիներին փող հավաքել, ուզել էր մեքենա գնել: Մի խոսքով, ով ինչ խնայողություն ուներ, սեղանին դրեց ու ընտանեկան հոգեպահուստով Ձիվանը 12 ինքնաձիգ, 6 ծեռքի թնդանոթ, արկղներով փամփուշտ հայթայթեց, Հատուկ գունդ տարավ: Նա 1-ին գունդարտակի հրամանատարն էր, ենթակայության ներքո երեք վաշտ ուներ, բայց ամենաբարդ, ամենավտանգավոր մարտական առաջադրանքներն էր կատարում ու կարգադրել ամենեւին չէր սիրում: Զինվորներն, իհարկե, դա տեսնում: Աֆղանստանում ծեռք բերած ռազմավարական հմտությունները յուրացնում, մարդկային արժանիքները՝ բարությունն ու առաքինությունը առանձնահատուկ էին գնահատում:

1991 թվականի հուլիսին նրանք առանց Ձիվանի տուն եկան: Սիագին մի, նախուտեստ, խորտիկներ էին բերել:

- Մամ ջան, տար պահիր,- ասացին,- երկու-երեք օրից մեր հրամանատարի տարեդարձն է, ուզում ենք նրան անակնկալ մատուցել, մի լավ ուրախացնել:

Տարեդարձի նախորդ օրը, սակայն, Ձիվանն ու Պետրոսը անսովոր ժամի, զենքերով, ուսապարկերով հայտնվեցին:

- Շահումյանն ենք գնում,- կարճ կտրեց Ձիվանը,- դրությունը ծանր է:

Մայրը նախազգացում ունեցա՞վ: Չունեցա՞վ: Տագնապը յուրովի արտահայտեց:

Բա էդքան միսը, ուտելիքն ի՞նչ անեմ, ընկերներդ տարեդարձի համար են բերել:

- Ի՞նչ պիտի անես, բաժանիր հարեւաններին...

Կեսգիշերն անցել էր՝ բազում տարիների բացակայությունից հետո Իրկուտսկից վերադարձավ Արշակը: Ոնց էլ էդ օրերին Ռուսաստանը ծայրից-ծայր կտրել, տուն էր հասել: Ձիվանը կրտսեր եղբորը շատ էր կարոտել, բայց խնդմնդաց.

- Հը՞, եկել ես տարեդարձս շնորհավորե՞ս:

- Չէ, եկել եմ կռվեմ,- անսեթեւեթ պատասխանեց Արշակը,- հենց իմացա Շահումյանը հայաթափում են, գործարարություն, շահ, եկամուտ մոռացա:

- Մի խոսքով, մենք երկու ախպերով, առավոտ շուտ գնում ենք:

- Երեքով ենք գնում...

Ուղղաթիռները վայրէջք կատարեցին Գյուլիստանի մատույցներում: Հյուսիսային Արցախի բնակիչները Հայաստանից իրենց օգնության փութացած ջոկատներ շատ էին դիմավորել, բայց հայկական կանոնավոր բանակ առաջին անգամ էին տեսնում: Շրջապատել էին ուղղաթիռներն ու փաթաթվում, համբուրում էին ցած իջնող հատուկ գնդի մարտիկներին, որոնք քողարկվելու համար խորհրդային բանակայինի համազգեստ էին հագել...

Ազերի օմոնականները չէին հանգստանում, օր ու գիշեր ռմբակոծում էին էրքեջը: Տեղակայվելուն պես Ձիվանը ռազմական խորհրդակցություն հրավիրեց: Ներկայացան Շահեն Մեղրյանը, տեղի մյուս ջոկատների հրամանատարները: Որոշվեց առկա ուժերը երկու մասի բաժանել, միաժամանակ պաշտպանել էրքեջն ու Բուզլուխը: Ընդհանուր համակարգողի պարտականությունն ստանձնեց Ձիվանը: Նրա անմիջական հսկողությամբ հայ զինվորներն ու կամավորականները խրամատներ, գաղտնի կրակակետեր փորեցին: Առավոտյան սթափվեցին լեռներ դղրդոցից: Ձիվանը հեռադիտակը հովիտ ուղղեց, ապշեց: Խորհրդային զորամիավորումների մի ծայրը դեռեւս Կիրովաբադի զորակայանում էր, մյուսն արդեն Շահումյան էր հասնում: Բարձրաստիճան տպայի ուսադիրով հրամանատարը, հենց զրահամեքենաներով հայկական դիրքերին մոտեցավ, բարձրախոսով խելամտության կոչ արեց, հորդորեց պաշտպանությունը դադարեցնել: Նույնիսկ սպառնաց.

- Եթե չդադարեցնեք, Ադրբեջանի օմոնականներին մեզնից առաջ ենք թողնելու, որ գյուղերը մտնեն, անձնագրային ստուգում անցկացնեն:

Էրքեջի ու Բուզլուխի տեղաբնակները գիտեին, թե դա ինչ է նշանակում, բռնագաղթած մարտունաշենցիները նկարագրել էին օմոնականների անողոք հաշվեհարդարը ոչ միայն երկրապահ կամավորականների, այլեւ կանանց, երեխաների ու նույնիսկ զառամյալ ծերունիների նկատմամբ:

Բնականաբար, Ձիվանը թույլ չտվեց, որ գյուղացիները խուճապի մատնվեն՝ նրանց ապահով Վերին Շեն տեղափոխեց, իսկ պաշտպանական ուժերը միավորելով, որոշեց դիրքավորվել էրքեջում:

Հակառակորդի գրոհը սկսվեց ակնկալվածից վաղ, ազերի օմոնականները շտապում, ուզում էին որքան հնարավոր է շուտ էրքեջ մտնել, որ թալանեն, լլկեն, ողջակիզեն: Ձիվան Աբրահամյանի մարտիկները նրանց հրանետների բուռն, դիպուկ համազարկերով դիմավորեցին: Բռնկվեց երկու զրահամեքենա: Հավանաբար նույնիսկ խորհրդային զորամիավորումները նման նախապատրաստված, լավ կազմակերպված դիմադրության չէին սպասում: Նահանջեցին ու առաջարկեցին բանակցություններ սկսել: Ձիվանը վճռեց խորհրդային զորքի հետ ոչ մարտի բռնվել, ոչ էլ բանակցություն վարել: Առանց զոհ, մինչեւ իսկ վիրավոր տալու իր զորքը հանեց մարտադաշտից, Շամփրապտուկ բարձունքի մատույցներում գերակա դիրք գրավեց: Մարտավարական այդ խուսանավումն իր պատճառն ուներ: Ետեւում Վերին Շեն՝ Շահումյանի ամենամեծ գյուղերից մեկն էր, որտեղ ապաստանել էին շրջակա բնակավայրերի փախստականները: Ընդհանուր հաշվով 14 հազար ծերունի, կին, երեխա: Ձիվանը ուխտել էր կյանքի գնով պաշտպանել նրանց:

Հենց այդտեղ էլ նրան գտավ Վազգեն Սարգսյանը: Նա ծանոթացավ իրավիճակին, հանձնարարականներ տվեց, Ձիվան Աբրահամյանին նշանակեց պաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար: Վերջում, երբ զինվորական շիլայի մամլած խորանարդիկներն էին պաքսիմատի նման չոր-չոր խրթխրթացնում, հարցրեց:

- Հը՞ Ձիվան ջան, ի՞նչ ես ուզում, որ Հայաստանից ուղարկեմ:

- Զինվորներս բավարար զենք-զինամթերք, տաք գրատ, նույնիսկ կոշիկ չունեն:

Երեք օր անց Սպարապետը կատարեց Ձիվանի ցանկությունը: Բայց նա արդեն չկար:

***

Երեք օր շարունակ Վերին Շեն պաշտպանները վանում էին խորհրդային զորամիավորումների ու ադրբեջանական օմոնի համատեղ գրոհները: Գլխավոր հրամանատարը գյուղի շուրջը, հավասար հեռավորության վրա, խոր խրամատներ էր փորել տվել, կարգադրել էր բեռնատարներով քարաժայռեր բերել, լրացուցիչ արգելապատնեշներ ստեղծել: Նրա այդ հրամանը, ցավոք, բոլորը չէ, որ բարեխղճորեն էին կատարել: Այլապես հակառակորդի հրասայլը սողանցք չէր գտնի, ընդհուպ այն դիրքին չէր մոտենա, որը պաշտպանում էին Ձիվան Աբրահամյանն ու մարտական ընկերները՝ Նիկոլայ Հայրապետյանը, Վարդան Տերտերյանը: Զրահամեքենաների գրոհը նռնականետներով ընդունելն անիմաստ էր, իհարկե, բայց եթե հրամանատարը նահանջեր, նրան կհետեւեին բոլոր պաշտպանները: Իսկ ետեւում Վերին Շեն էր՝ 14 հազար հայ ծերունիներ, հայ կանայք, հայ երեխաներ:

- Կրակ,- հնչեց Ձիվանի խզված ձայնը:

Նռնականետները ճարճատեցին:

Հրասայլը չարագուշակ ոռնաց:

Կոլյան ընկավ:

Վարդանն ընկավ:

Ձիվանի նռնականետի լիցքն սպառվեց: Հակառակորդի զրահամեքենաների ետեւից գալիս էին օմոնականներն ու հարեւան բնակավայրերի ազերիները, որոնք զինված էին կացիններով, դաշույններով եւ նույնիսկ սուրսայր ածելիներով: Եթե գյուղ մտնեին...

- Չէ, չեմ թողնի:

Նա խլեց զոհված մարտընկերոջ ինքնաձիգը, խրամատից դուրս գալով, մեն-մենակ թշնամու դեմ գնաց: Հակառակորդները խոցում էին նրան զենքի տարբեր տեսակներով ու զարմանում էին, որ չի ընկնում: Դեմքն ամբողջովին ողողված էր արյամբ, թվում էր ոչինչ չի տեսնում, չի էլ շնչում, բայց, միեւնույնն է, շարունակում էր առաջ շարժվել: Առաջ շարժվել ու կրակել:

***

Այդ օրը Տաշքենդից հյուրեր էին գալու, Բավական նանը հայկական համադամ կերակուրներ էր պատրաստել, նախօրոք սեղանը բացել, սպասում էր: Հանկարծ ներս մտավ Թամարը, որը Լաչինում գլխից վիրավորվել, բուժվելու համար Երեւան էր եկել: Նա արագ-արագ սեղանի վրայից հավաքեց սպասքը, սփռոցը ծալեց:

- էդ ի՞նչ ես անում,- զարմացավ մայրը,- հյուրերը չե՞ն գալու:

- Եկել եմ, տարել եմ ուրիշ ծանոթի տուն:

- Ինչի՞:

- Ձիվանին եմ բերում:

Բերեցին...

***

Ամեն շաբաթ, ճիշտ նույն ժամին, հուշիկ քայլերով մի սեւազգեստ կին է բարձրանում եռաբլուր: Նա ծեռքի ծաղկեփունջը բաժանում է երեք հավասար մասի, դնում իր որդու եւ նրա երկու կողմերում հուղարկավորված, ասես մահվանից հետո էլ՝ նրան հավատարիմ մնացած մարտընկերների՝ Կոլյայի, Վարդանի շիրիմներին: Երբ ծանոթ ծառուղով վերադառնում է, բոլորն ակնածանքով ճանապարհ են բացում, շշնջում.

- Հերոսի մայրն է...

***

Հերոսներն ինչո՞վ են տարբերվում մեզնից՝ սովորական մահկանացուներից: Նրանով, որ չեն մեռնում, դառնում են ոգի, հարկ եղած պահին մեր ժողովրդին նոր հաղթանակների են առաջնորդում:

Մենք սպասում ենք քեզ, Ձիվան...